





Արաս Հրատարակչություն  
A r a s Y a y ı n c ı l ı k

İstiklal Caddesi, Hıdivyal Palas 231 Kat 1  
34430 Tünel, Beyoğlu-İstanbul  
Tel: (0212) 252 65 18 - 243 06 02  
www.arasyayincilik.com  
info@arasyayincilik.com  
Sertifika No: 44967

ARAS - ԱՐԱՍ 297

ԹԱԳԱԻՈՐԸ ԵՒ ԹԱԳՈՒՀԻՆ

գիր և գիծ՝  
Անահիտ Սարգիսեան

գոյն և ձև՝  
աղուոր բաներ՝  
Վահագն Քէշիշեան և Թինա Քոբեմա

Խմբագիր՝  
Սարին Աբալաչ

Տպագրություն  
Ֆապրիգա Պասըմ

«Թագաւորը և Թագուհին»  
2005, Երեւան

Իսկ այսօր բարեփոխուած՝  
Դեկտեմբեր 2023, Իսթանպուլ

ISBN 9786257460361

Հեղինակին փափաքով, այս շարքէն լոյս տեսած  
գիրքերուն մէջ «ամէն» բառը գրուած է «ե»-ով:

Հրատարակութիւնը կը կատարուի  
Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութեան կողմէ  
հովանաւորուած «Աղուոր բաներ» ծրագիրի միջոցով:



CALOUSTE GULBENKIAN  
FOUNDATION




Թագաւորը  
էլ  
Թագուհին



Կարդալ  
կամ խաղալ,  
ամեն ուրբաթ  
կամ շաբաթ,  
սոսուօտեան  
կամ երեկոյեան,  
ժամը եօթին  
կամ ութին,  
երբեմն ալ  
եօթուկէսին...





## Պալատին բանալին

Թագաւորը հարցուց թագուհիին.

- Ո՛ւր է պալատին բանալին...

Թագուհին պատասխանեց թագաւորին.

- Չկայ պալատին բանալին...

Առանց բանալիի

պալատին դուռը

ինչպէս բացուի...

Եթէ ուղտը

ասեղի ծակէն կ'անցնի,


ուրեմն թագաւորն ալ

բանալիի՛ ծակէն կ'անցնի...

Ուղտը կ'անցնի,  
Թագաւորն ալ կ'անցնի,  
Իսկ Թագուհին...

Ուղտը կ'անցնի,  
Թագաւորը կ'անցնի,  
Թագուհին ալ կ'անցնի  
Եւ պալատին խաղը կը սկսի...





## Թագաւորին մօրուքը

Թագաւորը ճաղատ էր,  
գլխուն  
նոյնիսկ մէկ թել  
մազ չունէր,  
բայց մօրուքը երկար էր...  
Երբ գլուխը կ'օձառէր,  
օձառը վըճ կը սահէր,  
իսկ մօրուքը  
օր ըստ օրէ կ'երկարէր,  
մինչեւ ո՛ւր պիտի հասնէր,  
Թագուհին ալ կը գանգատէր...



Թագաւորը սամտր մը ունէր,  
սակայն գլխուն  
նոյնիսկ մէկ թել  
մազ չունէր,  
որովհետեւ ճաղատ էր,  
բայց մօրուքը երկար էր...  
Սամտրով մօրուքը կը սամտրէր,  
երբ կը սամտրէր,  
շատ կը ցաւէր...

Թագաւորը  
կը չարչարուէր՝ ա՛յ,  
կը տառապէր՝ ո՛ւյ,  
իսկ մօրուքը  
օր ըստ օրէ կ'երկարէր,  
մինչեւ ո՞ւր պիտի հասնէր,  
Թագուհին ալ կը զանգատէր...



Թագաւորը ճաղատ էր,  
գլխուն  
նոյնիսկ մէկ թել  
մազ չունէր,  
բայց մօրուքը երկար էր...  
Գիշերները կը մտածէր,  
թէ մօրուքը ո՞ր դնէր՝  
վերմակին տանձ,  
վերմակին վրանձ,  
քունը աչքէն կը փախէր...

Թագաւորը քուն չունէր,  
կը չարչարուէր՝ այ,  
կը տառապէր՝ ո՛ւյ,  
իսկ մօրուքը  
օր ըստ օրէ կ'երկարէր,  
մինչեւ ո՞ր պիտի հասնէր,  
Թագուհին ալ կը գանգատէր...

Եթէ թագուհին  
սուր մկրատ մը ունենար,  
մօրուքին խաղը  
խըրթ պիտի վերջանար...

Եթէ մօրուքին խաղը  
խըրթ վերջանար,  
թագուհին արդեօք  
ուրիշ գանգատ պիտի ունենար...